

200

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՅԱԿԱՅԱՆ, ԽԱՆՈՒԹ ԵՎ
ԱՎՏՈԼՎԱՅՄԱՆ ԿԵՏ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-
Երևան մայրուղի 54-55 կմ 66 հողամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝
Է. ՓԱՄԲՈՒԿՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՑԱԿԱՅԱՆ, ԽԱՆՈՒԹ ԵՎ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հոդամաս

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Է. ՓԱՄԲՈՒԿՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	6
1.2	Հապավումներ	6
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	7.
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7.
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).....	11
1.5.1	Ներկա վիճակի նկարագիր	11
1.5.2	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	11
1.5.3	Ջրամատակարարում և ջրահեռացում.....	15
1.5.4	Զեռուցում և օդափոխություն.....	16
1.5.5	Կանաչապատման աշխատանքներ	16
1.5.6	Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ.....	17
1.5.7	Աղմուկ և թրթռում:.....	17
1.5.8	Նախատեսվող գործունեության հատակագծեր.....	20
1.5.9	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց	25
1.5.10	Շինհրապարակի հատակագիծ.....	26
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ	27
2.1	Աշխատանքների կատարման սխեմա	28
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են	29
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	29
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	30
2.3.1	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	30
3.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	32
3.1	Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.....	34
3.2	Սեյսմիկա և երկրաբանություն	35
3.3	Կլիման և օդերևութաբանական պայմանները	35
3.3.1	Քամի	37
3.4	Օդային ավազան	37
3.5	Զրագրություն	38
3.5.1	Մակերևութային ջրերի որակ	39
3.5.2	Սևանա լիճ	41
3.5.3	Ստորերկրյա ջրեր	47
3.6	Հողերի նկարագիրը.....	47

3.7	Կենսաբազմազանություն	48
3.7.1	Բուսական աշխարհ	48
3.7.2	Կենդանական աշխարհ	51
3.8	Պատմամշակույթային հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ	54
3.9	Թափոնների կառավարում	59
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	61
4.1	Շինարարական աշխատանքներ	61
4.1.1	Օդի աղտոտում	61
4.1.2	Աղմուկի և թրթռումների ազդեցություն	61
4.1.3	Զրոգտագործում և ջրահեռացում	61
4.1.4	Ազդեցությունը հողածածկի վրա	62
4.1.5	Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	62
4.1.6	Շինաղբ	62
4.1.7	Սոցիալական ազդեցությունը	62
4.2	Շահագործման փուլ	62
4.2.1	Օդի աղտոտում	62
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	64
5.1	Ռիսկերի գնահատում	64
5.2	Արտանետումների աղբյուրները	65
5.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	65
5.3.1	Մթնոլորտային օդ	65
5.3.2	Ջրային ռեսուրսներ	65
5.3.3	Հողային ռեսուրսներ	66
5.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	67
5.3.5	Հակահրդեհային միջոցառումներ	67
5.3.6	Աղմուկ և թրթռում	68
5.3.7	Թափոնների կառավարում	68
5.3.8	Տարածքի բարեկարգում կանաչապատում	69
5.3.9	Օդերևութաբանական պայմանների դեպքում իրականացվող միջոցառումներ	69
6.	ԲԵՆԶԱԼՅԱԿԱՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	69
6.1	Ընդհանուր դրույթներ	69
6.2	Ռիսկերի գնահատում	70
6.2.1	Հիմնական վտանգներ	70
6.2.2	Ռիսկերի մակարդակի գնահատում	70
6.3	Կանխարգելիչ միջոցառումներ	71
6.3.1	Տեխնիկական միջոցներ	71
6.3.2	Կազմակերպչական միջոցներ	71
6.4	Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան	71
6.4.1	Պայթյուն / Հրդեհ	71
6.5	Երկրաշարժ	71

6.6	Սողանք.....	7.1
6.7	Տարհանման կարգ.....	7.1
6.8	Պատասխանատվություն.....	7.2
6.9	Վերահսկում և թարմացում.....	7.2
6.10	Եզրակացություն.....	7.2
7.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	7.3
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌ ԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	7.4
	ՇՐՋԱԿԱ ՄԻՋ ԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹ ՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ԾՐԱԳԻՐ	7.7
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	8.2
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	8.3

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	Է. Փամբուկյան
Անձնագրային տվյալներ՝	Անձնագիր՝ AU0451606 Տրված՝ 05.10.2021թ., 010-ի կողմից
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հողամաս
Գնահատման հաշվետվության մշակող՝	Ա/Ձ Արամ Գալոյան ՀՀ ք. Երևան Սևանի փ. 2. 86/2 galoyanaram1985@gmail.com հեռ. +374 99 994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից, միջազգային ստանդարտներին համապատասխան հեղուկ վառելիքի լցակայան, խանութ և ավտովազման կետ:

Հեղուկ վառելիքի լցակայանը նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հոդամաս հասցեում: Հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2014թ./ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի "բ" ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բենզալցկայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Վարսեր բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հոդամաս հասցեում նախատեսվող բենզալցկայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև:

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ- 121 (ընդունված 1994թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) – սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. – Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ

ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է

շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-

րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Բենգալցկայանի, խանութի և ավտովագման կետի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հոդամաս հասցեում:

Հողատարածքի բնութագրերը՝

Կադաստրային ծածկագիրը՝ 05-086-0119-0155

Մակերեսի չափը (հա)՝ 0.22777

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարածքը ունի մասնակի տեք ռելյեֆ, կառուցապատված չը:

Հարևանությամբ են գտնվում համայնքային և մասնավոր հողատարածքներ, արևավային ֆոտովոլտային կայան, գազակցակայան:

Հեռավորությունը գոյություն ունեցող գազակցակայանից՝

- Խանութ, սպասակրման սրահ – 17.5մ
- ստորգետնյա վառելիքի ռեզերվուար – 25մ

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 3415մ³: Շինարարական աշխատանքների ընթացքում այն կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Վարսեր, Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հոդամաս հասցեում նախագծվել է բենգալցակայան, խանութ և ավտովագման կետ պատվիրատուի առաջադրանքի և ՀՀ քաղաքաշինության նորմերին համապատասխան:

Կառույցը հանդիսանում է 4-րդ ռիսկայնության աստիճանի օբյեկտ: Հողատարածքը օգտագործվում է համաձայն գործառնական նշանակության:

Նախատեսվում է կառուցել ժամանակակից, համաշխարհային չափանիշներին համապատասխանող ավտոմոբիլային հեղուկ վառելիքի լիցքավորման կայան ավտովացման կետով:

Հողամասի սահմանին կից միակ ճանապարհը M4 մայրուղին է, մյուս կողմերից բոլորը սեփականության իրավունքով այլ սուբյեկտներին պատկանող հողամասեր են, այդ պատճառով դեպի հողատարածք մուտքը հնարավոր է միայն M4 մայրուղուց: Մայրուղու և հողամասի միջանկյալ հատվածը անտառտնտեսության տարածք է՝ որի համաձայնությունը առկա է:

Մայրուղուն զուգահեռ նախատեսվում է կառուցել երկրորդական ճանապարհ, որից հնարավոր կլինի դանդաղեցման և արագացման գոտիներով կազմակերպել հողամասի մուտքն ու ելքը:

Երկրորդական ճանապարհն էլ կարող է ծառայել մուտք և ելքի ճանապարհ հարեվանությամբ գտնվել այլ հասարակական հողամասերի համար:

ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՑԱԿԵՏԵՐ

Բենզալցակայանում նախատեսվում է երեք բենզինի, մեկ դիզելի դիսպենսեր սարք:

Բենզալցակայանի ծածկի առավելագույն բարձրությունը ± 0.00 հատակագծային նիշից 5.6 մ է:

ԽԱՆՈՒԹ ՍՐԱՀ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Խանութի շինության տանիքի բարձրությունը 4.4 մ: Խանութի սրահի մակերեսը կազմում է 64 քմ: Շինության ներսում նախատեսվում է երկու սանհանգույց՝ հարմարեցված սակավաշարժ խմբերին: Ինչպես նաև սենյակներ՝ սպասրկող անձնակազմի և խանութի պահեստի համար:

ԱՎՏՈՒՎԱՑՄԱՆ ԿԵՏ

Ավտովացման կետը նախատեսված է միաժամանակ երկու ավտոմեքենա լվանալու համար:

Ավտովացման կետի ծածկի առավելագույն բարձրությունը՝ 5.6 մ:

Տարածքի ընդհանուր մակերեսը 2277.7 քմ: Կառուցապատման մակերեսը 234.54 քմ (10.3%):

Բենզինի և դիզելի ռեզերվուարները նախատեսվում է իրականացնել ստորգետնյա, ճանապարհից 27 մ հեռավորության վրա: Հողատարածքից դուրս գտնվող կղզյակի հատվածը առաջարկվում է բարեկարգել պատվիրատուի սեփական միջոցներով:

Բսի-ների համար նախատեսվում է իրականացնել թեքահարթակ, կայանման տեղ, սանհանգույց, վերելակ եվ ապահովել անարգել մոտեցում բոլոր անհրաժեշտ կետերին:

Հեղուկ վառելիքի լցակայանի շվաքարանը նախատեսվում է իրականացնել գործարանային արտադրության մետաղական կոնստրուկցիաներով:

Ծածկի երեսպատումը նախատեսվում է իրականացնել այլումինե կոմպոզիտ պանելներով:

Շվաքարանի, շինության եվ ավտովագման կետի տանիքի ծածկը նախատեսվում է իրականացնել ծալքաթիթեղով: Շվաքարանի եվ շինության տանիքի ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել կազմակերպված ներքին: Ավտովագման կետի ջրահեռացումը՝ կազմակերպված արտաքին:

Համաձայն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ 22 մայիսի 2023 թվականի N 04-Ն հրամանի Հեղուկ վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններով ԱՀՎԼԿ-ի հեռավորությունները մինչև մանկական նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, գիշերօթիկ դպրոցների, ստացիոնար բուժական հիմնարկների հողամասերի սահմանները կամ բնակելի և հասարակական շենքերի պատերը պետք է ընդունել 50մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունը պետք է որոշել բաշխիչ կետերից և վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններից: Օրական 500-ից ոչ ավելի միայն մարդատար ավտոմոբիլների սպասարկման համար նախատեսված ԱՀՎԼԿ-ի հեռավորությունը մինչև վերը նշված օբյեկտները թույլատրվում է նվազեցնել, բայց ընդունել 25մ-ից ոչ պակաս:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ՝	2277.70 ԶՄ	
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝	234.54 ԶՄ	10.30%
ԾՎԱՔԱՐԱՆԻ ՍՅՈՒՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	3.36 ԶՄ	
ԱԿՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԻ ՍՅՈՒՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	4.20 ԶՄ	
ԽԱՆՈՒԹ ՍՐԱԴԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԻՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝	138.38 ԶՄ	
ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ Ե/Ք ՊԱՏԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	3.60 ԶՄ	
ԿԱՌԵԼԻՔԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՌԵԶԵՐՎՈՒՐՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	40.00 ԶՄ	
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ԶՐԱՎԱԶՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝	45.00 ԶՄ	
ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝	523.00 ԶՄ	22.96%
ԱՆԶՐԱԹԱՓԱՆՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	1520.16 ԶՄ	66.74%
ՄԱՅԹԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	119.42 ԶՄ	
ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	40.20 ԶՄ	
ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	1360.54 ԶՄ	
ԱՀՎԼԿ-Ի ԾՎԱՔԱՐԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝	217.50 ԶՄ	
ԱԿՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԻ ԾՎԱՔԱՐԱՆԻ ՄԱԿԵՐԵՍԸ՝	107.20 ԶՄ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ՝	559.24 ԶՄ	

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է խոտածածկի տեսքով:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Տեխնոլոգիական մաս

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք՝ Սևան գյուղ Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հողամաս հասցեում հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման նախագծով նախատեսված է հինգ բաքերի մոնտաժում, որոնք իրենցից ներկայացնում են 10 խմ ծավալով – 3 հատ, 5 խմ ծավալով- 2 հատ: Բաքերի տեղադրման խորությունը մինչև 3մ:

Նախագծով նախատեսվում է նոր տարայի տեղադրում, մեկ հարթակի վրա հողի մակերեսից խորության վրա:

Ռեգերվուարների սարքավորումները մոնտաժվում են մետաղական հորի մեջ, որը ծածկվում է մետաղական կափարիչով: Ռեգերվուարները կոռոզիայից պաշտպանելու համար, ներկվում են հակակոռոզիոն ներկով:

Ռեգերվուարները վառելիքով լիցքավորվում են անմիջապես ավտոցիստեռնից լիցքավորման տեղամասի միջոցով: Վառելիքը ռեգերվուարներից տրվում է խորքային պոմպի միջոցով, որը տեղադրված է վառելիքաբաշխիչների մեջ:

Արտածման խողովակի ներքևի մասում տեղադրված է հետադարձ ընդունող կափույր: Ռեգերվուարները կրակից պաշտպանելու համար նախատեսված են կրակի ապահովիչներ:

Հեղուկ վառելիքի լցակայանի տարածքը անհրաժեշտ է ցանկապատել: Ցանկապատը պետք է պատրաստված լինի չիրկիզվող նյութերից: Կայանների ներհրապարակային ճանապարհների տրանսպորտային շինությունները /անցատեղերը, անցուղիները և այլն/ պետք է պատրաստվեն չիրկիզվող նյութերից: Կայանների տարածքները պետք է ունենան պահպանական/պահակային լուսավորում: Կայանների տարածքը պետք է լինի մաքուր: Անցուղիները և անցումները պետք է լինեն ազատ: Կայանների տարածքում արգելվում է արտադրական գործընթացներին ոչ պիտանի նյութերի պահեստավորումը և պահպանումը: Ստորգետնյա ռեգերվուարներ են համարվում այն ռեգերվուարները, որոնց վերին եզրը գտնվում է հարակից տարածքի նախագծային նշագծից առնվազն 0,2 մ ցածր:

Ստորգետնյա ռեգերվուարներին են հավասարվում այն արտաքին ռեգերվուարները, որոնք լցածածկվում են խարամով վերին եզրից հաշված առնվազն 0,2 մ բարձրության վրա, իսկ լայնքով՝ ռեգերվուարի պատից հաշվելով 6մ հեռավորության վրա: Արտաքին ռեգերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեգերվուարի տրամագծից ոչ պակաս, իսկ եթե դրանց տրամագիծը 2 մ-ից պակաս է, ապա առնվազն 2մ: Ստորգետնյա ռեգերվուարների միջև հեռավորությունը պետք է լինի մոտակա ամենամեծ ռեգերվուարի տրամագծի կեսից ոչ պակաս, բայց առնվազն 1 մ: Ստորգետնյա ռեգերվուարների անջատող սարքավորումները, ապահովիչ կափույրները և հսկիչ-չափիչ սարքերը պետք է գտնվեն գետնի /լցածածկի/ մակերեսից բարձր:

Հակահրդեհային համակարգ

Բենզալցակայանները բարձր հրդեհավտանգության և պայթյունավտանգության գոտիներ են, ուստի դրանց հակահրդեհային համակարգերը պետք է լինեն բազմամակարդակ և հատուկ նախագծված դյուրավառ հեղուկների (բենզին, դիզելային վառելիք) մարման համար: Հակահրդեհային նպատակով տարածքում նախատեսվում է տեղադրել 100մ³ ծավալով ստորգետնյա հակահրդեհային ջրավազան:

Ստորև ներկայացնում է նախատեսվող բենզալցակայանի ժամանակակից հակահրդեհային համակարգի հիմնական բաղադրիչները.

1. Վթարային անջատման համակարգ (Emergency Shut-off)

Սա հրդեհի դեպքում ամենաառաջին և ամենակարևոր քայլն է:

Ավտոմատ անջատիչներ. Տեղադրվում են բենզաբաշխիչ սարքերի (պոմպերի) և պահեստարանների վրա: Վտանգի դեպքում ակնթարթորեն փակում են վառելիքի մատակարարման խողովակները:

Վթարային կոճակ (E-Stop). Տեղադրվում է աշխատակիցների համար հեշտ հասանելի վայրում (օրինակ՝ դրամարկղի մոտ) և դրսում: Սեղմելիս ամբողջ կայանը հոսանքազրկվում է, և վառելիքի հոսքը դադարում է:

2. Ավտոմատ հրդեհաշիջման համակարգեր

Տեղադրվում են անմիջապես վառելիքի բաշխիչ սարքերի (պոմպերի) վերևում՝ ծածկի տակ:

Փրփրային համակարգեր (Foam Systems). Կիրառվում է վառելիքի պահեստարանների (ցիստեռնների) կամ մեծ տարածքների համար: Հատուկ փրփուրը ծածկում է այրվող հեղուկի մակերեսը՝ թույլ չտալով գոլորշիների բռնկում և սառեցնելով մակերեսը:

3. Հրդեհի հայտնաբերման և ազդանշանային համակարգ

Տվիչներ (Սենսորներ). Ստանդարտ ծխի տվիչների փոխարեն լցակայաններում ավելի արդյունավետ են ջերմային (արձագանքում են ջերմաստիճանի կտրուկ աճին) և բոցի տվիչները (արձագանքում են կրակի ուլտրամանուշակագույն կամ ինֆրակարմիր ճառագայթմանը):

Ազդարարում. Ներառում է հզոր ձայնային շշակներ և թարթող լուսային ազդանշաններ, որոնք զգուշացնում են մարդկանց անհապաղ տարահանվելու մասին:

4. Առաջնային հրդեհաշիջման միջոցներ (Ձեռքի կրակմարիչներ)

Նույնիսկ ավտոմատ համակարգերի առկայության դեպքում պարտադիր է ձեռքի կրակմարիչների առկայությունը յուրաքանչյուր պոմպի մոտ և շենքի ներսում:

Փոշային կրակմարիչներ (OP / OPI). Արդյունավետ են վառվող հեղուկների (B դաս) համար:

Ածխաթթվային կրակմարիչներ (OU / OY). Կիրառվում են հատկապես էլեկտրական սարքավորումների բռնկման դեպքում (E դաս), քանի որ չեն վնասում տեխնիկան:

5. Կանխարգելիչ և այլ ենթահամակարգեր

Հողանցում և ստատիկ հոսանքի պաշտպանություն. Բենզինի շարժումից առաջացող ստատիկ կայծերը կանխելու համար բոլոր խողովակները, ցիստեռնները և պոմպերը պետք է ունենան հուսալի հողանցում:

Շանթարգել (Կայծակնապաշտպանություն). Պաշտպանում է կայանը կայծակի հարվածներից և դրանց հետևանքով առաջացող հրդեհներից:

1.5.3 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Նախատեսվող հեղուկ վառելիքի լցակայանի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացված է պատվիրատուի պատվերին և գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծում նախատեսված է ջրամատակարարումն իրականացնելու համար, գոյություն ունեցող ջրագծից միացում ջրամատակարարման համար: Նախատեսված է սանհանգույցների սնուցում de20 պոլիէթիլենային խողովակներով:

Միացումն իրականացվում է մետաղ/պոլիէթիլեն կցորդային միացության հանգույցի միջոցով:

Նախատեսված է ներքին տեղամասի խողովակները մոնտաժել ստորգետնյա եղանակով պատերի կամ հատակի հարթեցնող շերտի մեջ արված ակոսների միջոցով պոլիպրոպիլենային խողովակներով:

Սանիտարական սարքավորումներից կոյուղահոսքն ու ավելորդ ջրերը հեռանում են գոյություն ունեցող կոյուղու կանգնակի միջոցով, որն էլ միանում է կոյուղու գոյություն ունեցող դիտահորերին:

Նախատեսված է կոյուղագծի ներքին տեղամասի խողովակները մոնտաժել ստորգետնյա եղանակով, հատակի հարթեցնող շերտի տակով, պոլիվինիլքլորիդե $\Phi 110 - 50$ խողովակներով:

Կոյուղու խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել ռետինե սեղմող օղակներ, իսկ հիմքերում արված անցքերում, որոնցով անցնում են խողովակները տեղադրել պողպատե պաշտպանիչ պատյաններ և լցնել չայրվող էլաստիկ նյութով:

Ջրագծի և կոյուղու համակարգերի մոնտաժումն ու փորձարկումը կատարվում է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերի ու կանոնների ՇՆուԿ 3.05.01-85:

Տարածքի անձրևաջրերի հեռացումը կազմակերպվում է ասֆալտապատման թեքությունների հաշվին և միանում է տարածքում կառուցվող ե/բ միաձույլ ջրահեռացման վաքերին: Վաքերից անձրևաջրերը հեռանում են ՊՎՔ 200 խողովակների միջոցով և լցվում են գործարանային արտադրության յուղորսիչ հորի մեջ, որից հետո միայն միանում են փողոցի վրա գործող սեղավատար համակարգին:

Հողային բոլոր աշխատանքներն իրականացնել այն բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնց իրավասության տակ են գտնվում ստորգետնյա կոմունիկացիաները:

1.5.4 Ջեռուցում և օդափոխություն

Շենքի սենքերում ջեռուցում և օդի լավորակում ապահովելու նպատակով նախագծով նախատեսվում է Mitsubishi Electric ընկերության արտադրության կոնդիցիոներների երկու սալիտ համակարգեր: Սանհանգույցի և պահեստի ջեռուցման համար նախատեսված են էլեկտրական կոնվեկտորներ:

Սենքերում կիրառվում են առանձին կառավարմամբ կասետային և պատի կոնդիցիոներներ: Արտաքին բլոկները տեղադրված են շենքի դրսի պատերում:

Խողովակաշարը նախագծված է ֆրեոնային պղնձե խողովակներից գործարանային մեկուսիչով: Սառնագդակը հանդիսանում է R32 էկոլոգիապես մաքուր ֆրեոն:

Նախագծով նախատեսվում է մեխանիկական օդի արտածումը սանհանգույցից և խոհանոցային գլխանոցից, որը տեղադրված է Hot-Dog սարքավորումի վրա: Պահեստում նախատեսվում է բնական օդափոխություն դիմացի պատերում տեղադրված ճաղավանդակների միջոցով:

Արտածման օդատարը խոհանոցային գլխանոցից պատրաստված է ոչ ժանգոտվող պողպատից 0.7մմ հաստությամբ, իսկ սանհանգույցից՝ 0.5մմ հաստությամբ «Պ» դասի ցինկապատ պողպատից: Բաց մոնտաժվող օդատարները փոշեներկել 2 անգամ իսկ օդատարները մոնտաժվող կախովի առաստաղներում ջերմամեկուսացնել ֆոլգայապատ հանքային բամբակով $b=50$ մմ:

1.5.5 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել գազոնի տեսքով:

Նախատեսվում է կազմակերպված կաթիլային ոռոգման համակարգ: Կանաչապատ տարածքների ոռոգման ընկերությունը կղիմի լիազորված մարմնին, համապատասխան ջրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

1.5.6 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 523 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 2$

t – ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175 \text{ օր}$

$$W_{u.3} = (0.006 \times 523) \times 2 \times 175 = 1098.3 \text{ մ}^3/\text{տարի}$$

1.5.7 Աղմուկ և թրթռում:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության ընթացքում աշխատանքների իրականացնելիս շինարարական տեխնիկայի աշխատանքը: Հաշվարկը առված է ենթադրելով, որ բոլոր շին.տեխնիկան շահագործվում է միաժամանակ՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

Ելակետային տվյալներ

Շինարարության հրապարակի կազմակերպման աշխատանքների փուլ

- Վերամբարձ ավտոկոնսկ Գаличанин KC-65715-10՝ 102 դԲ:

Հողային աշխատանքների փուլ

- Բուլդոզեր KOMATSU D37-EX-22՝ 97 դԲ:
- Էքսկավատոր Hyundai 170W՝ 99 դԲ:

Շինմոնտաժային աշխատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ CB-69B՝ 96 դԲ:
- Վերամբարձ կոունկ KB403՝ 100 դԲ (առկա կոունկների հետ համեմատելի):
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ CB-695՝ 98 դԲ:

- Բեռնատար ինքնաթափ MA3 5550՝ 95 դԲ:
- Շարժական կոմպրեսոր 3Φ-55 B՝ 92 դԲ:
- Էլեռակցման սարք CTH 500՝ 90 դԲ:

Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագրիտական հաստատունը՝ մ²)

Ցուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Բուդոգեր KOMATSU D37-EX-22՝ $97 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Էքսկավատոր Hyundai 170W՝ $99 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Վերամբարձ ավտոկռունկ Галичанин КС-65715-10՝ $102 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 85.02$ դԲ:
- Ավտոբետոնախառնիչ СБ-69Б՝ $96 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 79.02$ դԲ:
- Վերամբարձ կռունկ KB403՝ $100 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 83.02$ դԲ:
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-695՝ $98 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 81.02$ դԲ:
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550՝ $95 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Շարժական կոմպրեսոր 3Φ-55 B՝ $92 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Էլեռակցման սարք CTH 500՝ $90 + 10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$LA_{\text{էկվ}} = 10 \cdot \log_{10}(10^{\{78.02/10\}} + 10^{\{78.02/10\}} + 10^{\{85.02/10\}} + 10^{\{79.02/10\}} + 10^{\{83.02/10\}} + 10^{\{81.02/10\}} + 10^{\{3 \cdot 78.02/10\}}) = 10 \cdot \log_{10}(1.047 \cdot 10^9) = 90.18 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 90.18 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850 կգ/մ³:

Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան: Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{\text{աղ}} = 23 \cdot \lg m_{\text{է}} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{\text{աղ}} = 13 \cdot \lg m_{\text{է}} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m_{\text{է}} = K \cdot m$ - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850

կգ/մ³

$$m_{\text{է}} = 7850 \cdot 1 = 7850$$

$$L_{\text{աղ}} = 23 \cdot \lg m_{\text{է}} - 13 = 23 \cdot \lg(7850) - 13 = 23 \cdot 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

$$LA_{\text{տար}} = LA_{\text{էկվ}} - L_{\text{աղ}} = 90.18 - 79.56 = 10.62 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 10.62 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթում

Թրթման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:


Հասարակական շենքերում թրթման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթման արագացում		Թրթման արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Ոչ մշտական թրթման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:


Շինարարության ընթացքում թրթման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:


1.5.8 Նախատեսվող գործունեության հատակագծեր



[illegible]


ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500







1.5.10 Շինարարական հատակագիծ



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ Բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների

կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4 Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 12 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բեռների ընդունման հարթակների պատրաստում
- Շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” եքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երբ ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին

համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Ապրանքային բեռները շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բեռնատար ինքնաթիռի միջոցով ավտոմատ բեռնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամբողջ շինարարության ընթացքում իրականացվելու են միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց գերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել ադմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Գնահատման հաշվետվությունի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են
Բենզալցկայանի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ՝

Nn/n	Անվանում	Մակնիշ	Քան.	Ծանոթություն
1	Ավտովերամբարձ կռունկ	KC-55744	1	կամ համարժեք
2	Ինքնաթափ ավտոմոբիլ	KAMA3 55111	2	կամ համարժեք
3	Էքսկավատոր	JCB-4CX	1	կամ համարժեք
4	Բեռնատար(автомобиль)	КамАЗ 65116	1	կամ համարժեք
5	Էլ. եռակցման սարք	СТН 500	1	կամ համարժեք
6	Շարժական կոմպրեսոր	ЗИФ 55В	1	կամ համարժեք

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ /գրունտ/՝ 1300մ³

Հետլիցք և տարածքի հարթեցում /գրունտ/՝ 600 մ³

Առաջացած 700մ³ ավելորդ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի հետ համաձայնեցված վայր:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 17 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 1 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 9 մարդ

2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բենզալցկայանի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. \Gamma} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 9 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 365 օր

$W_{\text{խ.տ.}} = (1 \times 0.016 + 9 \times 0.025) \times 365 = 97.96 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.24 \text{ մ}^3/\text{օր.}$

Ջրապահանջի հաշվրկը իրականացված է համաձայն СНиП2/04.85*

б) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T \times D$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 2277 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0005 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

D – ջրցանի օրեկան քանակը, 2 անգամ

$U_1 = 2277 \times 0.0005 \times 180 \times 2 = 409.86 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 2.27 \text{ մ}^3/\text{օր}$

Ջրապահանջի հաշվրկը իրականացված է համաձայն ГОСТ 12.3.00 2-75

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 507.82 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի, կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

Հետազոտվող տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի գ. Վարսեր Սևան-Երևան մայրուղի 54-55 կմ 66 հողամաս հասցեում և իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք:

Գեոմորֆոլոգիական պայմանները

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Կոտայքի հրաբխային սարահարթի սահմաններում:

Հիդրոերկրաբանական պայմանները

Գրունտային ջրերը մինչև 10,0մետր խորությունների վրա բացված չեն: Շինարարական տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարության համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները որոնք կարող են ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի նորմալ գործնեության վրա բացակայում են:

Սեյսմիկա ՀՀՇՆ 2020.04

Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմերի համաձայն տարածքը գտնվում է սեյսմիկ երկրորդ գոտում ($a=0,4g$), տեղամասի գրունտային պայմաններն ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում են որպես 2-րդ կարգ, որին համապատասխանում է $0,40g$ ($K_0=1,0$) գրունտի հորիզոնական արագացման առավելագույն արժեքը: Վերջնականապես գրունտի հորիզոնական արագացման առավելագույն արժեքի համար կատարվի՝ $a_{max}=0,40g$

Տեղանքի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն իրականացված տեղագնական, փորված հորատանցքների տվյալների տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային առաջացումները, որոնք ծածկվում են Էյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներաերկրաբանական էլեմենտներով՝ (վերելից-ներքեւ)։

Շերտ 1 Թափվածքային շերտ, հողաբուսական շերտ հզորությունը 1,0-2,0 մետր

Շերտ 2 Ավազակավեր, շականակագույն, խոնավ ձիգ-պլաստիկ կոսիստենցիա: Բացված հզորությունը 2,0-5,0մետր: Այն ունի համատարած տարածում:

Շերտ 3 Բազալտներ, թույլ ճեղքավորված, բացված հզորությունը 2,0-3,1 մետր: Այն չունի համատարած տարածում:

Շերտ 4 Հրաբխային խարամ, խճավազային կազմի, կարմրավուն բացված հզորությունը 1,9-6,0 մետր: Այն ունի համատարած տարածում:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպես հուսալի հիմնատակ առաջարկվում ավագակավերի շերտ, խճի, մանրախճի հետ, շերտը (շերտ-2): Գրունտների ֆիզիկամեխանիկական բնութագրերի հաշվարկային արժեքները բերվում են աղյուսակ 4-ում

Աղյուսակ 4

h h	Ֆիզիկամեխանիկական բնութագրերը		Գրունտի շերտերը		
			1	2	3
1	Գրունտի խտությունը, տ/մ ³		1.60	1.85	1,65
2	Ներքին շփման գործակից	tgφ	-	0,285	0,630
3	Տեսակարար շաղկապվածությունը, ՄՊա	C	-	0,031	0,002
4	Դեֆորմացիայի մոդուլը E, ՄՊա		-	7,0	30,0
5	Ամրության սահմանն ըստ միառանցք սեղմման, R _s , ՄՊա		-	-	-
6	Նեքնակի գործակից կգ/սմ ³		-	0,9	3,0
7	Կարգն ըստ սեյսմիկ հատկությունների		III	III	II

2. Նախագծային նիշի սահմաններում, առաջարկվում է ապահովել հիմնատակի գրունտների համասեռությունը:
3. Շինության ստորգետնյա մասերը հնարավոր մակերևույթային ջրային հոսքից պաշտպանելու նպատակով նպատակահարմար է իրականացնել ստորգետնյա մասերի ջրամեկուսացում:
4. Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 1,10 մետր:
5. Նախագծվող շենքի հիմնատակի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկա-երկրաբանական երևույթներ տեղամասում չեն հայտնաբերվել:
6. Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր ՀՀՇՆ 2020 համաձայն ուսումնասիրվող տեղամասը գտնվում է սեյսմիկ 2-րդ գոտում

($a=0.4g$): Տեղամասի գրունտային պայմանները սեյսմիկ II կարգ է: Սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են, $k_s=1,0$ $a_{max}=0.4g$ $\times 1,0=0.4g$:

$a_{max}=0.4g$:

Ինժեներ-երկրաբան,
երկր. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր



Ս. Հայրոյան

3.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի՝ Վարսեր, Գեղամավան և Լճաշեն բնակավայրերի տարածքային հատվածներում: Մարզը սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից սահմանակից է Ադրբեջանին: Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Մարզի գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի Արևելյան Սևանի, Վարդենիսի, որտեղ առկա են տասնյակ հրաբխային կոներ՝ հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմադան հրաբուխները: Լեռների ձագարաձև խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ: Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, իսկ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են:

Ռելիեֆը անհարթ բլրային է: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Տարածքը տափաստանային միջին լեռնային (1400-2300 ծ.մ.բ.), իրեն բնորոշ տափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ: Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը:

Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ափսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

3.2 Սեյսմիկա և երկրաբանություն

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես, կրելով սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերը ներծծվելով ապարների շերտերով ու ծակոտիկներով, սեզոնային բնույթի աղբյուրների և ժամանակավոր հոսքերի տեսքով բեռնաթափվում են Սևանա լիճ: Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի՝ ըստ սեյսմիկ հատկության տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:

3.3 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիման չորային է: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ: Ձմեռային եղանակային ռեժիմը ձևավորում է մթնոլորտի յուրովի թթվածնային ռեժիմ, դիտվում են թթվածնի կշիռային պարունակության մաքսիմում արժեքներ, որոնք աստիճանաբար նվազում են ըստ բարձրության: Ձմռան սեզոնում լիճը ծածկվում է սառույցով, և լճի ջրային ավազանի ազդեցությունը փափաքից ցամաքի թերմիկ ռեժիմի վրա զգալի նվազում է: Ամռանը գերակշռում է "արևոտ չափավոր խոնավ" եղանակային տիպը՝ նվազագույն տեղումների քանակով, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Տարածաշրջանը լանդշաֆտային, եղանակա-կլիմայական, միկրոկլիմայական պայմաններով շահավետորեն տարբերվում է մյուսներից: Տարածքը բաց է և չի էկրանավորվում բարձր լեռնազանգվածներով: Տարվա ընթացքում տարածաշրջանում դիտվում է արևափայլի մեծ տևողություն (2747 ժամ), ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների տարեկան դրական բալանս:

Ջերմաստիճանը

Թերմիկ ռեժիմը բավականին բարենպաստ է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 5.6°C , ամենատաք ամսվանը 16.3°C (օգոստոս), ամենասառը ամսվանը՝ -5.3°C (հունվար): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -32.5°C , իսկ բացարձակ առավելագույնը՝ 32.9°C :

Աղյուսակ 6. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Սևան լճային	-5.3	-5.0	-1.7	4.0	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9

Խոնավությունը

Տարեկան միջին արժեքը 72%: Ձմռանը քամիները հիմնականում ուղղված են դեպի լճի կենտրոնը, որի հետևանքով խոնավությունը հեռացվում է ավիամերձ գոտուց:

Աղյուսակ 7. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Սևան լճային	74	74	73	72	73	73	74	72	71	69	70	73	72	74	65	72	63

Մթնոլորտային տեղումները

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը կազմում է 531մմ: Ձյան ծածկույթը սկսում է ձևավորվել նոյեմբերի երրորդ տասնօրյակից, իսկ 2000 մ-ից բարձր Գեղամա լեռների հյուսիս-սային լանջերին՝ հոկտեմբերի երկրորդ կեսից: Հաստատուն և կայուն ձյան ծածկույթը ձևավորվում է դեկտեմբերին, որի միջին բարձրությունը հունվար-փետրվար ամիսներին հասնում է 2223մ-ի, իսկ ավիամերձ գոտում 10-20 սմ-ի:

Աղյուսակ 8. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Սևան լճային	18	24	38	64	89	78	54	37	33	47	31	18	531	129	402
	22	23	37	30	43	41	43	52	37	36	31	16	52		

3.3.1 Քամի

Աղյուսակ 8

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրերի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագությունները նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագությունները առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ					
		Միջին արագությունը, մ/վ																		
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16					
Սևան քաղաք	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4.2	Արլ	3.2	Արլ	5.4					
		4.1	4.0	3.3	2.7	2.9	5.3	5.4	3.7											
	ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3.3									
		3.9	3.7	3.2	2.5	3.8	6.3	5.5	3.4											
	հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3.1									
		4.7	4.1	3.2	2.7	2.1	2.5	3.1	2.8											
	հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2.7									
		4.0	3.8	2.7	2.2	2.3	5.3	4.3	2.7											

3.4 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Ծովագյուղ համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Վարսեր բնակավայրում հաշվառված բնակչության թվաքանակը կազմել է 2017 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 3), Ծովագյուղ համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,071մգ/լսմ, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/լսմ, ազոտի երկօքսիդ՝ 0,023 մգ/լսմ և ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/լսմ:

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

3.5 Ջրագրություն

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 3775 կմ³ է, մակերեսը՝ 1275.32 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ3), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ3): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան:


Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ2, իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ2: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Սևանա լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ3 տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցվող ջուրը:

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով:


Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածաշրջանում կան ստորգետնյա գրունտային ջրեր: Տարածաշրջանի մակերևույթային էռոզիան լավ նկատելի է թեք լանջերի վրա: Գարնանային և աշնանային անձրևների ժամանակ առաջանում են հեղեղատներ:

3.5.1 Մակերևութային ջրերի որակ

Համաձայն “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ 2024թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի քանակական մոնիթորինգն իրականացվում է 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: 2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը մոտ են եղել բազմամյա միջին արժեքներին և կազմել են դրանց 85-125%-ը: Արգիճի-Գետաշեն դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 4.68 մ3 /վ (բազմամյա միջինը՝ 5.44 մ3 /վ է), Գավառագետ-Նորատուս դիտակետում՝ 3.04 մ3 /վ (բազմամյա միջինը՝ 3.50 մ3 /վ է), Ձկնագետ-Ծովագյուղ դիտակետում՝ 1.35 մ3 /վ (բազմամյա միջինը՝ 1.09 մ3 /վ է): 2024 թվականին Սևանա լճի ավազանի գետերում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել: 2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը ցածր են եղել կամ մոտ ամսական նորմաներին, որոշ գետերում ջրի ամսական ելքերը հիմնականում ապրիլ, մայիս և հունիս ամիսներին գերազանցել են նորմաները:



Գծապատկեր 110. Ջրի տարեկան միջին ելքերի համեմատությունը նորմաների և 2023 թվականի տարեկան միջին ելքերի հետ



Գծապատկեր 111. 2024 թվականի ջրի միջին ամսական ելքերը նորմաների համեմատ

Որակական մոնիթորինգ Ջկնագետ գետի ջրի որակը Մեմյոնովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված բերիլիումով: Մարիկ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով և ծարիրով: Սոթք գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ծարիրով: Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով: Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, ալյումինով և կախութային չոր նյութերով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված բարիումով, ալյումինով, մանգանով և սուլֆատ իոնով, գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ, սուլֆատ իոններով, բարիումով, ալյումինով, մանգանով, ընդհանուր ֆոսֆորով և ընդհանուր լուծված աղերով: Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով: Ծակքար գետի ջրի որակը

գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ընդհանուր լուծված աղերով: Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ, քլորիդ իոններով, մոլիբդենով, վանադիումով, նատրիումով, ընդհանուր ֆոսֆորով և ընդհանուր լուծված աղերով: Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, մոլիբդենով, մանգանով և ալյումինով:

3.5.2 Սևանա լիճ

2024 թվականի 4-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 9. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2024 թվականի 4-րդ եռամսյակում
Հոկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.47	14.26	14.47	40.20	20.7	37.8	57.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.86	0.86	0.78	2.50	0.00	7.79	18.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	5.00	46.7	3.80	55.5	6.30	42.7	112.3
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.60	12.5
Ընդամենը	19.93	64.42	21.75	106.10	56.6	91.0	166.9
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	21.4	156.0
Գոլորշացում լճի մակերևույթից	52.7	46.2	45.1	144.0	102.0	145.3	178.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	53.1	46.6	45.5	145.2	123.1	176.6	300.2
Կուտակում (նվազում)	-25.5	-25.4	-25.5	-76.4	-205.4	-92.2	2.60
Բացարձակ անկապք	-7.67	43.22	1.75	37.30		6.70	
Հարաբերական անկապք %	14.4	48.1	3.70	20.4	0.10	5.90	25.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.52	1278.701	38.2022
Ամսվա վերջին օրը	1900.46	1278.130	38.1258
Միջին ամսական	1900.49	1278.415	38.1640

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.06 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.24 31.10.24 ընթացքում 0.29 (մ)
31.10.24 և 31.10.23 մակարդակի տարբերությունը 0.22 (մ)

Նույնություններ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Հստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.87	11.46	11.54	34.87	24.9	38.4	54.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.62	0.62	0.62	1.86	0.00	8.15	22.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	6.10	4.00	9.60	19.7	0.00	30.9	79.5
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.10	9.90
Ընդամենը	21.19	18.68	24.36	64.23	46.4	82.7	141.1
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	18.2	151.0
Գոլորշացում լճի մակերևույթից	42.6	34.8	24.6	102.0	80.6	116.4	151.5
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	43.0	35.2	25.0	103.2	93.9	142.0	260.1
Կուտակում (նվազում)	-12.8	-12.7	-12.8	-38.3	-218.2	-66.4	8.80
Բացարձակ անկապք	-9.01	-3.82	12.16	-0.67		6.90	
Հարաբերական անկապք %	21.0	10.9	32.7	0.65	0.40	7.00	25.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.46	1278.130	38.1258
Ամսվա վերջին օրը	1900.43	1277.845	38.0875
Միջին ամսական	1900.44	1277.940	38.1003

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.03 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.24 30.11.24 ընթացքում 0.26 (մ)
 30.11.24 և 30.11.23 մակարդակի տարբերությունը 0.23 (մ)

Դեկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	11.23	11.15	12.39	34.77	20.7	36.9	51.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.62	0.62	0.68	1.92	0.00	7.94	22.9
Տեղումները լճի մակերևույթի վրա	0.10	4.20	7.30	11.6	0.40	22.7	56.4
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.20	7.90
Ընդամենը	14.55	18.57	23.07	56.19	43.1	71.7	108.4
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	19.5	177.0
Գոլորշացում լճի մակերևույթից	28.4	26.3	23.5	78.2	62.9	94.9	113.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	28.8	26.7	23.9	79.4	63.0	122.2	240.9
Կուտակում (նվազում)	-12.7	-12.8	-12.7	-38.2	-178.4	-57.3	24.9
Բացարձակ անկապք	-1.55	4.67	11.87	14.99		8.50	
Հարաբերական անկապք %	5.38	14.9	33.2	15.9	0.40	7.70	46.2

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.42	1277.750	38.0748
Ամսվա վերջին օրը	1900.39	1277.464	38.0366
Միջին ամսական	1900.41	1277.655	38.0621

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.03 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.24 31.12.24 ընթացքում 0.22 (մ)
31.12.24 և 31.12.23 մակարդակի տարբերությունը 0.22 (մ)

2024 թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.52 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 22 սմ-ով: 2024 թվականի դեկտեմբերի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.39 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր

է եղել 22 սմ-ով: 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը լճի մակարդակն իջել է 13 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը հոկտեմբեր ամսին կազմել է 2.498 մլն մ3, նոյեմբերին՝ 1.860 մլն մ3, դեկտեմբերին՝ 1.922 մլն մ3:

Այսպիսով, 2024 թվականին՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակը կազմել է 185.146 մլն մ3:

2024 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողումը սկսվել է հունիսի 16-ից և շարունակվել մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ և, համաձայն Հրազդան ՀէԿ-ի ջրանցքի Գեղամավան դիտակետի տվյալների, այդ ժամանակահատվածում լճից բացթողնված ջրի գումարային ծավալը կազմել է 131.038 մլն.մ3:


2024 թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.701 կմ2, ծավալը 38.2022 կմ3, իսկ դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար՝ 1277.464 կմ2 և 38.0366 կմ3:

Սևանա լճի ջրերի որակ



Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների 3 դիտակետում՝ տարբեր խորության շերտերում: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման Հավելված 12.1-ի համաձայն:

Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ մակերևութային, 0.5մ և 5մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 10մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), 20մ և 25մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 30մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ մակերևութային, 0.5մ և 5մ խորության շերտերում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), 10մ և 20մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 30մ և 55մ խորության շերտերում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 70մ և 80մ խորության շերտերում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Փոքր Սևանի Այրիվանքի մոտ մակերևութային, 10մ, 20մ և 30մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 5մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 40մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):





Գծապատկեր 79. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 80. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 81. Մեծ Սևանում ամռնիում իռնի կոնցենտրացիաների փոփոխությունները



3.5.3 Ստորերկրյա ջրեր

Քանակական մոնիթորինգ

Քանակական մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ակունք (N1053) և Խաչաղբյուր (N2093) գյուղերի բնաղբյուրներում 2024թ. ընթացքում ջրի ծախսը աճել է, տատանումները կազմել են 30,4% և 75%: Գավառ քաղաքի N2014 և Լիճք գյուղի N2100 դիտակետերում հունվար-ապրիլ և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին դիտվել են ջրի ծախսի ցածր արժեքներ, իսկ մայիսօգոստոս ամիսներին ծախսը ավելացել է՝ զգալի տատանումներով: Աղբերք գյուղի N2091 աղբյուրի ծախսը եղել է կայուն՝ աննշան տատանումներով: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին բնաղբյուրների ջրի ծախսը ավելացել է միջինը 1-93%-ով: Ծախսի և մակարդակի համեմատաբար կայուն արժեքներ դիտվել են Վարդենիս քաղաքի N1810, N1811 և Դարանակ բնակավայրի N2095 շատրվանոց հորատանցքերում:

Վարդենիս քաղաքի N1809 շատրվանոց հորատանցքում դիտվել է ծախսի և մակարդակի նվազում, իսկ N2090 դիտակետում նշված պարամետրերի արժեքները աճել են: N1812, N2013 դիտակետերում 2024թ. ընթացքում մակարդակի արժեքները համեմատաբար կայուն են, ջրի ծախսը նվազել է, տատանումները կազմել են համապատասխանաբար 17% և 94%: Սևանի ՋԿՏ-ի N2101 չշատրվանոց հորատանցքում նախորդ տարվա համեմատ մակարդակը բարձրացել է միջինը 8.5 %-ով:

Որակական մոնիթորինգ

Որակական մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Հանքայնացման արժեքները գտնվել են 0.09-0.4գ/լ տիրույթում, սուլֆատ իոնի կոնցենտրացիան՝ 1.5-26.3 մգ/լ, նիտրատ իոնի կոնցենտրացիան՝ 3.4-42.7մգ/լ, քլորիդ իոնի կոնցենտրացիան՝ 0.7-26.7մգ/լ տիրույթում, պղնձի և արսենի կոնցենտրացիաները գտնվել են համապատասխանաբար 0.00012-0.014 մգ/լ և 0.0006-0.0085 մգ/լ տիրույթներում, իսկ կապարի կոնցենտրացիան կազմել է 0.0001մգ/լ բոլոր դիտակետերում: Դիտված բոլոր կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

3.6 Հողերի նկարագիրը

Հողային ռեսուրսներ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են լեռնային սևահողերը, անտառային դարչնագույն հողերը: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով: Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները: Մարզի խոշոր

հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էրոզիան, ավիամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա: Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք: Լեռնային սևահողերն օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր, իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (գարի, երկարամյա խոտեր): Հանքաքանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ: Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները, գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

3.7 Կենսաբազմազանություն

3.7.1 Բուսական աշխարհ

Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռ-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները: Նախատեսվող գործունեության տարածաշրջանը հիմնականում տափաստանային է, տափաստաններին բնորոշ բուսականություն հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: Պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ): Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինյոն սովորական (*Agaricus campestris*), շամպինյոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր,

որոնք ունեն բուժիչ հատկություններ: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (Paxillus involutus), կեղծ կոճղասունկ (Hypholoma fasciculare), ճանճասպան հովազային (Amanita pantherina), շամպինյոն 1411 դեղնամաշկ (Agaricus xanthodermus), գոմաղբասունկ թեփուկավոր (Coprinus picaceus), սարդոստայնասնկեր (Cortinarius), թելիկասնկեր (Inocybe), շարքասնկեր (Tricholoma) ցեղերի որոշ տեսակներ և այլն:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովող թփուտները՝ ցածրաճ գլիուտներ (Juniperus depressa) և այլն: Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 9 - ում: Աղյուսակում ընդգրկված բույսերի որոշ տեսակները ներկայացված են Նկար 8 - ում:

Աղյուսակ 9. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
1	Ազնվամորի	Rubus idaeus
2	Աղվեսագի եղեգանման	Alopecurus arundinaceus
3	Անթառամ ոսկեգույն	Helichrysum callichrysum
4	Ասպիրակ աղեղնեզր	Spiraea crenata
5	Արոսենի սովորական	Sorbus aucuparia
6	Գառան դմակ մեծ	Sedum telephium
7	Գերիմաստի	Viburnum lantana
8	Դաշտավլուկ սոխուկակիր	Poa bulbosa
9	Դժնիկ լուծողական	Rhamnus cathartica
10	Եղինջ երկտուն	Urtica dioica
11	Թրաշուշան կովկասյան	Gladiolus caucasicus
12	Լավատեր թուրինգիական	Lavathera turingiaca
13	Լոշտակ սպիտակ	Bryonia alba
14	Խատուտիկ Ստեվենի	Taraxacum stevenii
15	Կորենի սովորական	Berberis vulgaris
16	Կակաչ արևելյան	Papaver orientale
17	Կակաչ հայկական	Papaver armeniacum
18	Կակաչ սակավատերև	Papaver paucifoliatum
19	Կատվաղաղձ մերկ	Nepeta nuda
20	Կատվաղաղձ Մուսինի	Nepeta mussini
21	Կատվախոտ դեղատու	Valeriana officinalis
22	Հազարատերևուկ սովորական	Achillea millefolium
23	Հիրիկ փոքր	Iris pumila
24	Մատիտեղ ճնճղուկի	Polygonum aviculara
25	Մատուռնի ուղիղ	Potentilla recta
26	Նեղտերևի	Chamaenerium angustifolium
27	Շուշանաբանջար սոխուկավոր	Chaerophyllum bulbosum
28	Շուշանաբանջար ոսկեգոծ	Chaerophyllum aureum
29	Պտեր արական	Dryopteris filix mas
30	Սեզ սպիտակ	Agrostis alba
31	Սիզախոտ մարգագետնային	Phleum pratense
32	Սրոհունդ ալպիական	Hypericum alpestre

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
33	Սրոհունդ խոցված	<i>Hypericum perforatum</i>
34	Սրոհունդ մշտիկատերևանման	<i>Hypericum hyssopifolium</i>
35	Մասրենի Զրաչի	<i>Rosa hrachiana</i>
36	Մասրենի առատափուշ	<i>Rosa spinosissima</i>
37	Վիկ մկան	<i>Vicia cracca</i>
38	Տանձենի կովկասյան	<i>Pyrus caucasica</i>
39	Տուղտավարդ թավրիզյան	<i>Alcea tabrisiana</i>
40	Փրփրուկ վեցաթերթ	<i>Filipendula hexapetala</i>
41	Օշինդր արևելյան	<i>Artemisia orientalis</i>
42	Օշինդր դառը	<i>Artemisia absinthium</i>

Նկար 8. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները



Տուղտավարդ թավրիզյան - *Alcea tabrisiana*



Սրոհունդ մշտիկատերևանման - *Hypericum hyssopifolium*



Վիկ մկան - *Vicia cracca*



Լավատեր թուրինգիական - *Lavatera turingiaca*



Կակաչ արևելյան - *Papaver orientale*



Կատվադաղձ Մուսսինի - *Nepeta mussini*



Միզախոտ մարգագետնային - *Phleum pratense*



Փրփրուկ վեցաթերթ - *Filipendula hexapetala*



Մատիտեղ ճնճղուկի - *Polygonum aviculare*



Ասպիրակ աղեղնեղ - *Spiraea crenata*

Տարածաշրջանում լայն տարածում ունեն Ագնվամորու (*Rubus idaeus*), Վարդ առատափուշի (*Rosa spinosissima*), Մասրենի Հրաչի (*Rosa hrachiana*) և Ասպիրակ աղեղնեղի (*Spiraea crenata*) մացառուտները, որոնց արանքներում հանդիպում են Ծորենի սովորականը (*Berberis vulgaris*) և Լոշտակ սպիտակը (*Bryonia alba*): Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), Թրաշուշան հայաստանյան (*Gladiolus hajastanicus* Gabrielian) և Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*) ծառեր: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները: Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 10- ում:

Աղյուսակ 10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Անողնուցուկ Գրոսհեյմի	<i>Puccinellia grossheimiana</i> V.I.Krecz.	EN
2	Արոսենի հայաստանյան	<i>Sorbus hajastana</i> Gabr.	VU

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում Դրախտիկ գյուղի ափամերձ հատվածում : Թերակղզու այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հանդիպել:

3.7.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի այս հատվածը ներկայացված է բավականի լայն տարածված հարուստ կենսաբազմազանությամբ, ինչպես նաև մի քանի կարմիրգրքային տեսակներով:

Կենդանիների կարմիրգրքային տեսակները տարածված են հիմնականում պահպանված չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Տարածաշրջանում ամենատարածված և բազմաքանակ կենդանիներն են մկնաման կրծողները և մանր թռչնատեսակներ, որոնք հանդիսանում են գիշատիչ թռչունների և կենդանիների, այդ թվում կարմիրգրքային կենդանատեսակներից որոշների համար որպես կերային օբյեկտներ: Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 11-ում: Աղյուսակում ընդգրկված կենդանիների որոշ տեսակները ներկայացված են Նկար 10-ում:

Աղյուսակ 11. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
1	Թխակապույտ աղավնի	Columba livia
2	Ժուլան	Lanius collurio
3	Լոր	Coturnix coturnix
4	Խայտաբղետ քարակեռնեխ	Monticola saxatilis
5	Հոպոպ	Upupa epops
6	Մեծ ճուռակ	Buteo buteo
7	Մոխրագույն ագռավ	Corvus corone
8	Մոխրագույն արտույտ	Calandrella rufescens
9	Մոխրագույն կաքավ	Perdix perdix
10	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster
11	Պարող քարաթռչնակ	Oenanthe isabellina
12	Ջրածիճառների տեսակներ	Chlidonias
13	Սև կեռնեխ	Turdus merula
14	Սևաճակատ շամփրուկ	Lanius minor
15	Սևավիզ քարաթռչնակ	Oenanthe finschii
16	Սովորական կաչաղակ	Pica pica
17	Սովորական հողմավար բազե	Falko tinnunculus
18	Սովորական ճայ	Corvus monedula
19	Սովորական որոր	Larus ridibundus
20	Սովորական սարյակ	Sturnus vulgaris
21	Սովորական սիտեղ	Sitta europaea
22	Սովորական քարաթռչնակ	Oenanthe oenanthe
23	Տափաստանային արտույտ	Melanocorypha calandra
24	Փուփուլավոր արտույտ	Galerida cristata
25	Աղվես	Vulpes vulpes
26	Աքիս	Mustela nivalis
27	Գորշուկ/ Փորսուղ	Meles meles
28	Դաշտամկներ	Microtinae
29	Համստեր	Cricetus cricetus
30	Ձյան դաշտամուկ	Chionomys nivalis
31	Նապաստակ	Lepus europaeus
32	Գայլ	Canis lupus
33	Շնագայլ	Canis aureus
34	Քարակզաքիս	Martes foina

Նկար 10. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները



Լոր - *Coturnix coturnix*



Միսրազույն ագռավ - *Corvus corone*



Թխակապույտ աղավախ - *Columba livia*



Սովորական հողմավար քազե - *Falco tinnunculus*



Հոպուպ - *Upupa epops*



Սովորական սիտեղ - *Sitta europaea*



Ափս - *Mustela nivalis*



Դաշտամկներ - *Microtinae*



Եվրոպական - *Lepus europaeus*



Համստեղ - *Cricetus cricetus*

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված 5 կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 12-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները՝ Նկար 11-ում:

Աղյուսակ 12. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
1	Հարթ խխուկ	Gyrulus laevis	EN
2	Մոխրապտ սուզակ	Podiceps grisegena Boddaert	VU
3	Թշնա կարապ	Cygnus olo	VU
4	Մոխրագույն սագ	Anser anser	VU
5	Խայտաբաղ	Tadorna tadorna	VU
6	Լայնակտուց բաղ	Anas clypeata Linneus	VU
7	Սպիտակաճակատ սագ	Anser albifrons	VU

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
8	Կարմիր ցին	Milvus milvus	EN
9	Սպիտակապոչ արծիվ	Haliaeetus albicilla Linnaeus	EN
10	Գիշանգլ	Neophron percnopterus Linnaeus	EN
11	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
12	Աղավնաբազե	Falco columbarius Linnaeus	DD
13	Սապսան	Falco peregrinus Tunstall	VU
14	Հայկական որոր	Larus armenicus Buturlin	VU
15	Ներկարար	Coracias garrulus	VU

EN (Endangered) - վտանգված տեսակ

VU (Vulnerable) - խոցելի տեսակ

ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված են նաև մոխրագույն մեղու (Anthophora cinerea Frieze), Պորչինսկու իշամեղու (Bombus portshinskii Radoszhkowski) տեսակները:

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում՝ ափամերձ հատվածում: Այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հանդիպել:

3.8 Պատմամշակութային հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ներկայացնում է Վարսեր բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը: Ցանկում ներառված է ընդամենը 68 հուշարձան (10 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	9-20 դդ.	գ. մ.	—	5.86/1	S	կառուցապատված միջավայրում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Խաչքար	9-10 դդ.		—	5.86/1.1	Հ	հվ եզրին, բեկոր, արձանագիր
Խաչքար	10 դ.		—	5.86/1.2	Հ	ընկած գետնին
Խաչքար	10-11 դդ.		—	5.86/1.3	Հ	խրված հողի մեջ, եզրերը՝ ջարդված
Խաչքար	11-12 դդ.		—	5.86/1.4	Հ	ընկած գետնին
Խաչքար	11-12 դդ.		—	5.86/1.5	Հ	ընկած գետնին, վերնամասը՝ կոտրված
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/1.6	Հ	ընկած գետնին
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/1.7	Հ	ընկած գետնին, վերնամասը չի պահպանվել
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/1.8	Հ	հվ եզրին, կանգնեցված տձև պատվանդանին
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/1.9	Հ	ընկած գետնին, պահպանվել է միայն վերնամասը՝, ձախ անկյունը՝ կոտրված
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/1.10	Հ	ընկած գետնին
Խաչքար	14-15 դդ.		—	5.86/1.11	Հ	ընկած գետնին
Խաչքար	14-15 դդ.		—	5.86/1.12	Հ	խրված հողի մեջ
Խաչքար	15 դ.		—	5.86/1.13	Հ	կիսով խրված հողի մեջ
Խաչքար	15-16 դդ.		—	5.86/1.14	Հ	ընկած գետնին
Խաչքար	15-16 դդ.		—	5.86/1.15	Հ	խրված հողի մեջ
Խաչքար	15-16 դդ.		—	5.86/1.16	Հ	կիսով խրված հողի մեջ, զույգ խաչքարերից աջակողմյանը
Խաչքար	15-16 դդ.		—	5.86/1.17	Հ	կիսով խրված հողի մեջ, զույգ խաչքարերից ձախակողմյանը
Տապանաքար	16-17 դդ.		—	5.86/1.18	Տ	
Տապանաքար Խեչումի	17 դ.		—	5.86/1.19	Տ	
Տապանաքար	1639 թ.		—	5.86/1.20	Տ	
Տապանաքար Մարանի	1654 թ.		—	5.86/1.21	Տ	
Տապանաքար	1679 թ.		—	5.86/1.22	Տ	
Տապանաքար Գրիգորի	1688 թ.		—	5.86/1.23	Տ	
Տապանաքար Սարգսի	1691 թ.		—	5.86/1.24	Տ	
Տապանաքար Սարուխանի	1691 թ.		—	5.86/1.25	Տ	
Տապանաքար	1692 թ.		—	5.86/1.26	Տ	
Տապանաքար Պետրոսի	1693 թ.		—	5.86/1.27	Տ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
Տապանաքար	1696 թ.		—	5.86/1.28	S	
Տապանաքար Բարսեղի	17-18 դդ.		—	5.86/1.29	S	
Տապանաքար Առաքելի	1704 թ.		—	5.86/1.30	S	
Տապանաքար Վարդանի	1704 թ.		—	5.86/1.31	S	
Տապանաքար	1706 թ.		—	5.86/1.32	S	
Տապանաքար տեր Հովհաննեսի	1709 թ.		—	5.86/1.33	S	
Տապանաքար	1722 թ.		—	5.86/1.34	S	
Եկեղեցի	19 դ.	գ. մ.	—	5.86/2	S	կիսավեր
Խաչքար	10 դ.		—	5.86/2.1	Հ	ազուցված բեմի ճակատին, 4 խաչքարերից ձախից 2-րդը
Խաչքար	12 դ.		—	5.86/2.2	Հ	կանգնեցված բեմին, ստորին մասը չի պահպանվել
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/2.3	Հ	բեմին, աջակողմյան եզրագոտին և քիվը ջարդված
Խաչքար	13 դ.		—	5.86/2.4	Հ	ազուցված բեմի ճակատին, 4 խաչքարերից աջից 2-րդը
Խաչքար	13 դ.		—	5.86/2.5	Հ	ազուցված բեմի ճակատին, 4 խաչքարերից աջից 4-րդը
Խաչքար	13 դ.		—	5.86/2.6	Հ	ազուցված բեմի ճակատին, 4 խաչքարերից աջից 1-ինը
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/2.7	Հ	ազուցված հվ ավանդատան առկայություն
Գերեզմանոց	10-19 դդ.		—	5.86/2.8	S	Եկեղեցու շուրջը
Խաչքար	12 դ.		—	5.86/2.8.1	Հ	Եկեղեցու հվ-առ անկյան մոտ, հենած քարաբեկորին, ստորին մասը չի պահպանվել, վերին աջ անկյունը՝ կտրված
Խաչքար	13-14 դդ.		—	5.86/2.8.2	Հ	կանգնեցված հողի մեջ
Խաչքար	16-17 դդ.		—	5.86/2.8.3	Հ	հս պատի մոտ, արտաքուստ
Խաչքար	12-13 դդ.	հս-ամ մասում	—	5.86/3	Հ	գյուղի գործող գերեզմանոցի մոտ, կանգնեցված ցեմենտով ամրացված մեկ այլ Խաչքարի վրա
Խաչքար	12-13 դդ.	հս-ամ մասում	—	5.86/4	Հ	գյուղի գործող գերեզմանոցի մոտ, կանգնեցված գետնին
Խաչքար	12-13 դդ.	հս-ամ մասում	—	5.86/5	Հ	գյուղի գործող գերեզմանոցի մոտ, կանգնեցված գետնին
Խաչքար	12-13 դդ.	հս-ամ	—	5.86/6	Հ	գյուղի գործող գերեզմանոցի

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ
		մասում				մոտ, հենած քարերին, ստորին մասը չի պահպանվել
Խաչքար	14-15 դդ.	հս-ամ մասում	—	5.86/7	Հ	ցյուղի գործող գերեզմանոցի մոտ
Խաչքար	14-15 դդ.	հս-ամ մասում	—	5.86/8	Հ	ցյուղի գործող գերեզմանոցի մոտ
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1970-ական թթ. վրջ	գ. մ.	—	5.86/9	S	
Մատուռ «Ծաղկավանք»	16 դ.	ամ մասում	—	5.86/10	S	ամ եզրին, ձորափին վրկնգ.՝ 1984 թ.
Խաչքար	9-10 դդ.		—	5.86/10.1	Հ	կանգնեցված բեմին, ստորին եզրը՝ ջարդոտված
Խաչքար	995 թ.		—	5.86/10.2	Հ	ամրացված բեմին պատվիրատու՝ Կատրանիդե հայոց թագուհի (Գագիկ Ա Բագրատունու տիկինն է)
Խաչքար	10 դ.		—	5.86/10.3	Հ	կանգնեցված բեմին
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/10.4	Հ	կանգնեցված բեմին, ստորին մասը չի պահպանվել
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/10.5	Հ	կանգնեցված բեմին, եռատված
Խաչքար	15-16 դդ.		—	5.86/10.6	Հ	կանգնեցված բեմին
Գերեզմանոց	9-16 դդ.		—	5.86/10.7	S	մատուռի ամ կողմում
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/10.7.1	Հ	երկատված
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/10.7.2	Հ	պատվանդանին, վերին աջ կողմը՝ կոտրված
Խաչքար	12-13 դդ.		—	5.86/10.7.3	Հ	պատվանդանին, պահպանվում է 2 բեկորով, ստորին բեկորը՝ հենած պատվանդանին
Խաչքար	13 դ.		—	5.86/10.7.4	Հ	հենած մատուռի ամ պատին, արտաքուստ, երկատված
Խաչքար	14-15 դդ.		—	5.86/10.7.5	Հ	կանգնեցված ժայռաբեկորին
Խաչքար	15 դ.		—	5.86/10.7.6	Հ	խրված հողի մեջ, վերին աջ անկյունը՝ կոտրված

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն:

Աղյուսակ Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները

1	, Սևկատարէ հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20կմ արլ
2	, Ածղահակէ հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25կմ հվ-արմ
3	, Անանունէ ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45կմ հեռավորության վրա
4	, Քարե ծովէ քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
5	, Անանունէ հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
6	, Արմաղանէ հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5կմ արմ
7	, Հայրավանքէ բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 23կմ հս-արլ
8	Թառ (Կարմիր Կատար)	Գեղարքունիքի մարզ , հրաբուխ երկրաբանական հուշարձան

Երկրաբանական հուշարձաններ

21	, Սևկատարէ հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20կմ արլ
22	, Ածղահակէ հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25կմ հվ-արմ
23	, Անանունէ ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45կմ հեռավորության վրա
24	, Քարե ծովէ քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25	, Անանունէ հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
26	, Արմաղանէ հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5կմ արմ
27	, Հայրավանքէ բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 23կմ հս-արլ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

5.	, Սարանգէ աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 բարձրության վրա
6.	, Խաչերիէ աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ

		ծայրամասում
7.	, Արցունք քարէ աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 բարձրության վրա
8.	, Անանունէ աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 բարձրության վրա
9.	, Անանունէ աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 բարձրության վրա
10.	, Վանքի աղբյուրէ աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

13.	, Ակնաէ լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
-----	-------------	--

Կենսաբանական հուշարձաններ

4.	, Ենթալայան մարգագետինէ	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ
----	-------------------------	---------------------------------------

3.9 Թափոնների կառավարում

Աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	IV	9120060101004	30մ ³
2.	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.7 տ/տարի

3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	700 մ ³
4.	Զոտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)	IV	35131100 01 00 4	7 մ ³
6.	Զոտեսակավորված ալյումինի ջարդոն	V	35310101 01 99 5	3 մ ³
7.	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15%-ից ավել	III	31402303 04 03 3	8 մ ³
8.	Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ	V	35121601 01 99 5	0.1տ

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է աղբավայր:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Բենզալցկայանի շինարարության և շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի աղբավայր համապատասխան լիցենզավորված ընկերության կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության ազդեցությունը կարելի է բաժանել երկու պայմանական մասի.

- ազդեցություն՝ շինարարական աշխատանքների ընթացքում,
- ազդեցություն՝ շահագործման ընթացքում :

4.1 Շինարարական աշխատանքներ

Շինարարության փուլում ազդեցությունը պայմանավորված է փոշու արտանետումներով, աղմուկի մակարդակի բարձրացմամբ, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

4.1.1 Օդի աղտոտում

Շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառեղիքի այրման արդյունքում:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի ծածկված անթափանց թաղանթներով:

4.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին:

Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինարարության փուլում շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Օգտագործվող շինարարական տեխնիկական և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չգերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

4.1.3 Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է աշխատանքային հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

4.1.4 Ազդեցությունը հողածածկի վրա

Շինարարական աշխատանքների ժամանակ հողածածկի աղտոտում չի սպասվում:

Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 3415մ³: Շինարարական աշխատանքների ընթացքում այն կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

4.1.5 Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա

Տարածքը նախկինում ամբողջության յուրացված էր և այստեղ չկան բնական բուսածածկ կամ վայրի կենդանիների ապրելավայրեր: Համապատասխանաբար ազդեցություն կենսաբազմազանության վրա նույնպես չի լինի:

4.1.6 Շինադր

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական ադրն է: Շինարարական ադրը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր, հատուկ սահմանված երթուղիով:

4.1.7 Սոցիալական ազդեցությունը

Սոցիալական ազդեցության գործոններն են՝ շինարարական աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծումը, հողօգտագործում և հողի ձեռքբերում, ենթակառուցվածքների վրա հավելյալ լարվածություն, տեղական աշխատուժ, ժողովրդագրական խնդիրներ:

4.2 Շահագործման փուլ

4.2.1 Օդի աղտոտում

Հեղուկ վառելիքի կայանի ածխաջրածինների արտանետման աղբյուրներ են հանդիսանում նավթամթերքի ռեզերվուարները և վառելիքի լցման հանգույցները:

Լցակայանում կատարվելու է հեղուկ վառելիքի լիցքավորում, որի ընթացքում կառաջանան ածխաջրածինների արտանետումներ:

Բենզալցակայանների հիմնական առողջական վտանգները կապված են օդի աղտոտման հետ: Սակայն ժամանակակից տեխնոլոգիաների և անվտանգության միջոցների կիրառմամբ հնարավոր է զգալիորեն նվազեցնել այդ ռիսկերը:

4.2.2 Ջրահեռացում

Լցակայանում արտադրական հոսքաջրեր չեն առաջանում: Կայանում առաջանում են միայն կենցաղային կեղտաջրեր, Սանիտարական սարքավորումներից կոյուղահոսքն ու ավելորդ ջրերը հեռանում են գոյություն ունեցող կոյուղու կանգնակի միջոցով, որն էլ միանում է կոյուղու գոյություն ունեցող դիտահորերին:

4.2.3 Ջրային ռեսուրսների աղտոտում

Հեղուկ վառելիքի կայանի մոտակայքում ջրային ռեսուրսներ չկա, ազդեցություն չի սպասվում:

4.2.4 Հողային ռեսուրսների աղտոտում

Հողային ռեսուրսների վրա հեղուկ վառելիքի կայանի շահագործման ընթացքում ազդեցություն չի սպասվում:

4.2.5 *Սոցիալական ազդեցությունը*

Սոցիալական ազդեցության գործոններն են՝ նոր աշխատատեղերի ստեղծումը, ենթակառուցվածքների վրա հավելյալ լարվածություն, տեղական աշխատուժ, ժողովրդագրական խնդիրներ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

